Սոցփաթեթի շրջանակում հատկացվող ծառայությունների շրջանակում պահանջվող փաստաթղթեր

1. Հիփոթեքային վարկի ամսական վճարի մարում

➤ եթե հիփոթեքային վարկը տրամադրված է այլ բանկի կամ վարկային կազմակերպության կողմից՝ ներկայացվում է տեղեկանք (**տեղեկանքի վավերականության ժամկետը պետք է լինի ոչ ավել քան 15 օր**), որտեղ նշված կլինի, որ՝

- Սոցփաթեթի Շահառուի կամ նրա ընտանիքի անմիջական անդամի հիփոթեքային վարկը հանդիսանում է գույքի ձեռքբերման (այդ թվում՝ գնման իրավունքով) կամ կառուցապատման նպատակով տրամադրված հիփոթեքային վարկ,
- Սոցփաթեթի Շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը հանդիսանում է տվյալ վարկի վարկառու կամ համավարկառու,
- Վարկի մնացորդի չափը տեղեկանքը տրամադրելու պահին,
- անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը կամ վկայականի պատճենը, որով կհավաստվի Սոցփաթեթի Շահառուի կամ նրա ընտանիքի անմիջական անդամի՝ բնակարանի (անհատական բնակելի տան) սեփականատեր (համասեփականատեր) հանդիսանալու փաստը:

➤ եթե Սոցփաթեթի հաշվիվը բացված է այլ բանկում, իսկ հիփոթեքային վարկը տրամադրված է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից, ապա Հաճախորդին տրամադրվում է տեղեկանք համաձայն Բանկում հաստատված ձևաչափի:

Ընտանիքի անմիջական անդամի դեպքում նաև ներկայացվում են ստորև փաստաթղթերից մեկը՝
- Ամուսնու դեպքում - ամուսնության վկայական,
- Զավակի դեպքում - ծննդյան վկայական,
- Ծնողի դեպքում - ծնողի անձը հաստատող փաստաթուղթը և Սոցփաթեթի շահառուի ծննդյան վկայականը,
- որդեգրող, որդեգրված, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձ -համապատասխան հիմքը հաստատող փաստաթուղթ,
- տատի, պապի դեպքում - Շահառուի ծննդյան վկայականը, ծնողի ծննդյան վկայականը, տատի կամ պապի անձը հաստատող փաստաթղթերը,
- թոռան դեպքում Շահառուի վավակի և թոռան ծննդյան վկայականներ,
- համատեղ բնակվող՝ եղբոր, քրոջ դեպքում - համատեղությամբ բնակվելու հիմքը հաստատող փաստաթուղթը, ինչպես նաև ծնողի կամ ծնողների անձը հաստատող փաստաթուղթը կամ փաստաթղթերը, Շահառուի ծննդյան վկայականը և եղբոր կամ քրոջ ծննդյան վկայականը:

2. Ուսման վճարի փոխանցում

Անհրաժեշտ է Սոցիալական փաթեթում ընդգրկված ուսումնական հաստատությունից ներկայացնել ստորև փաստաթղթերը՝
- կանխավճարի փոխանցման հաշիվ կամ տեղեկանք
- հաշիվ-ապրանքագիր՝ համապատասխան վավերապայմաններով

Ընտանիքի անմիջական անդամի դեպքում ներկայացվում են նաև 1-ին կետում նշված փաստաթղթերը:

3. ՀՀ-ում հանգստի ապահովում

Անհրաժեշտ է Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկված կբոսաշրջային օպերատորներից ներկայացնել ստորև փաստաթղթերը՝
- կանխավճարի փոխանցման հաշիվ կամ տեղեկանք
- հաշիվ-ապրանքագիր՝ համապատասխան վավերապայմաններով
- Շահառու կամ իր ընտանիքի անմիջական անդամի և կբոսաշրջային օպերատորի միջև կնքված պայմանագիր
- Բանկ ներկայացված փաստաթղթում պարտադիր պետք է լինի նշում ծառայության մատուցման ամսաթվի/ժամկետի մասին:

Ընտանիքի անմիջական անդամի դեպքում ներկայացվում են նաև 1-ին կետում նշված փաստաթղթերը:

4. Առողջապահական փաթեթի մեջ չներառված լրացուցիչ ծառայություններից օգտվելու վճարի մարում

Անհրաժեշտ է Սոցիալական փաթեթի շրջանակներում բժշկական և ստոմատոլոգիական օգնություն և սպասարկում մատուցող առողջապահական կազմակերպություններից ներկայացնել ստորև փաստաթղթերը՝
1) կանխավճարի փոխանցման հաշիվ կամ տեղեկանք
2) հաշիվ-ապրանքագիր՝ համապատասխան վավերապայմաններով

Ընտանիքի անմիջական անդամի դեպքում ներկայացվում են նաև 1-ին կետում նշված փաստաթղթերը:

5. Մարզա-առողջարարական և սպորտային համալիրների, լողավազանների և այլ սպորտային կազմակերպությունների ծառայություններից օգտվելու վճարի մարում

Անհրաժեշտ է ներկայացնել Սոցիալական փաթեթի շրջանակներում ծառայություններ մատուցող մարզաառողջարանային հաստատություններից ստորև փաստաթղթերը՝
- կանխավճարի փոխանցման հաշիվ կամ տեղեկանք
- հաշիվ-ապրանքագիր՝ համապատասխան վավերապայմաններով

Ընտանիքի անմիջական անդամի դեպքում ներկայացվում են նաև 1-ին կետում նշված փաստաթղթերը:

6. Պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկի ամսական վճարի մարում (ինչպես մայր գումար, այնպես էլ՝ տոկոսագումարներ)

Անհրաժեշտ է ներկայացնել ստորև փաստաթղթերը՝
- **Սոցիալական փաթեթում ընդգրկված ուսումնական հաստատությունից** կանխավճարի փոխանցման հաշիվ կամ տեղեկանք և հաշիվ-ապրանքագիր՝ համապատասխան վավերապայմաններով
- եթե վարկը տրամադրված է այլ բանկի կամ վարկային կազմակերպության կողմից՝ նաև տեղեկանք, որտեղ նշված կլինի, որ Սոցփաթեթի Շահառուի կամ Շահառուի ընտանիքի անմիջական անդամի վարկը հանդիսանում է պետական սուբսիդավորմամբ վարկ և վարկի մնացորդի չափը տեղեկանքը տրամադրելու պահին:

Ընտանիքի անմիջական անդամի դեպքում ներկայացվում են նաև 1-ին կետում նշված փաստաթղթերը:

7. Սոցփաթեթի Շահառուին փոխկապակցված անձի համար ապահովագրավճարի մարման ծառայություն

որի դեպքում Սոցփաթեթի Շահառուն իրավունք ունի իր Սոցփաթեթի գումարներից փոխանցում կատարելու ապահովագրության հիմնադրամին՝ ապահովագրավճար վճարող անձին փոխկապակցված անձի համար ինքնուրույն վճարումներ կատարելու օրենքով սահմանված կարգին համապատասխան:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: